Նոր հավելված՝ Շվեյցարիայում «խելացի» զբոսանքների համար (տեսանյութ)



Հոկտեմբերի վերջին iPhone-ի, Android-ի, Windows Phone-ի համար թողարկվել է նոր՝ Swiss Art To Go կոչվող հավելվածը, որի օգնությամբ կարելի է վիրտուալ այցելություններ կատարել Շվեյցարիայի պատմամշակութային նշանակության շենքեր՝ գրում է Newsru.com-ը:

«Խելացի» հավելվածի օգնությամբ Շվեյցարիայի տարածքի ցանկացած կետում կարելի է գտնել շրջակայքի ամենանշանավոր շենքը: Ծրագիրն իր այս ունակությունները ձեռք է բերել՝ օգտագործելով «Շվեյցարիայում 5 զբոսաշրջային էքսկուրսավարներ»-ի տվյալները:

Այժմ նայելով սմարթֆոնի կամ պլանշետի էկրանին՝ կարելի է տեսնել հնագույն եկեղեցու, հայտնի առանձնատան և ճարտարապետական այլ համալիրների արտաքինը և ներքին հարդարանքը: Բացի այդ, դրա միջոցով կարելի է «այցելել» այն հաստատությունները, որոնք ավելի շատ են հետաքրքրում օգտատիրոջը:

20:00 Տեխնոլոգիա / Ինովացիա | Շաբաթ 16.11.2013

Copyright © 2004 - 2011 | All rights reserved.
1in.am Armenian News & Analyses.